## ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձութիւնը խնդրում է այն անձանց, որոնք կամենում են քաղաքի կենդրոնական մասերում դպրոցի համար վարձով բնակարան տալ սոյն տարւայ սեպտեմբերից, թող այդպիսիք բարեհաճեն յայտնել հոգաբարձութեանս մանրամասն պայմաններով։

Բնակարանը պէտք է լինի ոչ պակաս 5 սենեակից, իր բոլոր յարմարութիւններով։ Հոգաբարձութիւն.

## ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՕՄԻՍՍԻԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է,

Որ ներկայ տարւայ Մայիսի 8-ին և 9-ին, առաւօտեան ժամի 11-ին կօմիսսիայի գրասենեակում տեղի է ունենալու

## ԱՃՈՒՐԴ

I.

**8 Մայիսի 1912 թ.**

Մատակարարել սև փխրաքար զանազան մեծութեան 23,532 րուբ. արժողութեամբ (գրաւական 10%)

II

**9-ն Մայիսի 1912 թ.**

ա) Կապալով պէտք է տրւի հողային աշխատանքները 1546 րուբ. արժ. (գրաւական 10%) և

բ) Մի քանի տասնեակ հազար փութ շինարարական նիւթերի տեղափոխութեան բոլոր աշխատանքները գործի ամբողջ ընթացքում երկաթուղու կայարանից մինչև 39-դ արտիլ. բրիգադին կից հողաբաժինը, կօմիսսիայի հարկաւոր չափով։ 1—1

### ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

— —

Տպագրութեան անմահ տօնը յաւերժացնելու առթիւ վերջերս մամուլի մէջ եղել են շատ, բազմազան ու տարբեր առաջարկներ։

Գլխաւորապէս կանգ է առնւել «գրական ֆօնդ» հիմնելու վրայ։ Մենք դրա դէմ բնաւ ոչինչ չունենք և գտնում ենք նոյն իսկ նպատակայարմար և օգտաւէտ այդ առաջարկը։ Բայց աւելորդ չենք համարում մատնանշել մի ուրիշ հանգամանք ևս, որ կարող է ծառայել իբրև այդ մեծ տօնը յաւերժացնելու միջոց և նպատակայարմարութեան տեսակէտից պակաս գին չունի։ Դա «գրաշարների» ապահովութեան խնդիրն է, որ ինչ-ինչ հանգամանքներից ստիպւած մոռացութեան է մատնըւած և մամուլի մէջ չկայ յիշատակութեան և ոչ մի խօսք, չնայելով որ նրանց դրութիւնը միանգամայն աննախանձելի է և գտնւում են շատ ծանր կացութեան մէջ։

Գրաշարները կազմում են մի այնպիսի դասակարգ, որը անմիջական կապ ունի գրականութեան հետ, որը հէնց այդ գրականական դաշտի մշակման դժւարին գործում քրտնաջան աշխատող է հանդիսանում և, իր բոլոր եռանդն ու ոյժը գործադրելով, այդ դասակարգը զրկւում է իր շատ անգամներից, ենթարկելով նրանց այդ գործի հետ կապ ունեցող և նրանից բղխած ծանր պայմանների ազդեցութեանը։ Ժամանակը չէ՞ արդեօք մտածել դատապարտելի մոռացութեան մատնւած այս դասակարգի մասին, որով մենք կատարած կ՚լինենք մի վերին աստիճանի բարոյական-մարդասիրական գործ և, որոշ չափով ապահովելով նրանց, տւած կլինենք գրականութեանը անձնւէր և ուժեղ մշակներ։

«Գրականութիւն» և «գրաշար» գաղափարները այնպէս սերտ կերպով շաղկապւած են միմեանց հետ, որ մենք անկարող ենք զատել նրանց իրարից, առաւել ևս երբ ամենքս ներկայիս տարւած ենք առաջիկայ 400—ամեայ սքանչելի տօնը արժանավայել կերպով կատարելու և յաւերժացնելու խոհերով։

Լի ու լի յոյս ենք տածում, որ հայ հասարակութիւնը ի շարս ուրիշ առաջարկների ուշադրութեան կառնէ և այս, որով նա կանգնեցրած կլինի յաւիտեանս չմոռացւող մի արձան ի պատիւ հայ գրականութեան իր ամբողջութեամբ։

Այդ վեհ գաղափարական առաջարկների շարքին մենք միացնում ենք մէկը ևս. այդ մի համակրելի և խիստ նշանաւոր առաջարկ է, որ մօտ պէտք է լինի հայ հասարակութեան սրտին։ Դա «գրագիտութիւնն է»։ Զարմանալի բան է, խօսում ենք տպագրութեան մասին, բայց չենք ասում, որ մեր ազգի մեծագոյն մասը անգրագէտ է։ Էլ չենք բացատրում, թէ որքան մեծ անհրաժեշտութիւն է ներկայացընում հայկական կեանքի համար գրագիտութեան տարածելը։ Այս ամենն արդէն հին, բայց միշտ հրատապ հարցեր են, որ վաղուց պիտի իրականացած լինէին։

Աշէրօն.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

## Ա. Մ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլօմբ, ատամի հեռացում (առանց ցաւի) և այլն։ Կաբինէտին կից կայ լաբօրատօրիա արհեստական ատամների համար —իւրաքանչիւրը 1-3մ։

Աշակերտներին և ծառայողներին 20% զեղչ։

Ընդունելութիւնը 9—2 առաւօտ.
4—7 երեկոյեան։

Պուշկինսկայա, տուն Սևոյեանի, Առաքելեան դպրոցի մօտ. 20—8

### ԳԵՂԱՐԻԵՍՏԻ ՇԱՆՏԱԺԻՍՏՆԵՐԸ

Մօտ մի շաբաթ էր, որ տեղս ժր եկել ոմն «գերասան» Ի. Ի. Գէլեէր, որը զբաղւած էր յայտարարութիւններ և ռէկլամներ տալով մայիսի 3-ի «Կաբարէ» ներկայացման մասին։

Յայտարարութիւնների մէջ ուշա-